ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 1-Ա
20 փետրվարի 2014թ.

ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը նիստի օրակարգը հաստատելու մասին, որոշման նախագծի քվեարկության __10__ կողմ, __0__ դեմ, __0__ ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել Կապան քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի փետրվարի 20 -ի թիվ 1 նիստի օրակարգը.

1. Կապան քաղաքային համայնքի 2013 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին
2. Համայնքի սեփականություն համարվող գույքի 2013 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին
3. Կապան քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 143-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
4. Կապան քաղաքային համայնքի 2014 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին
5. Կապան քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 135-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
6. Համայնքի սեփականություն համարվող մի շարք բնակարաններ անհատույց /նվիրատվության կարգով/ օտարելու մասին
7. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը /հասարակական նշանակության ոչ բնակելի տարածքները/ վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
8. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Կապան քաղաքի Հ. Ավետիսյան փողոցի 10/28 հասցեում գտնվող 17.5 քառ.մ ոչ բնակելի տարածքը հրապարակային սակարկություններով օտարելու մասին
9. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Շինարարների փողոցի 4/42 հասցեում գտնվող 244.3 քառ.մ ոչ բնակելի տարածքը «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանը մշտական անհատույց օգտագործման հանձնելու մասին
10. Կապան քաղաքային համայնքի վարչական սահմաններում, բնակելի տների տնամերձ հողամասերին կից՝ քաղաքացիների կողմից ավել օգտագործվող հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

11. Կապան քաղաքային համայնքի (բնակավայրերի) հաստատված գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու նախագծման առաջադրանքի նախագիծը հաստատելու մասին

12. Կապան քաղաքային համայնքում քաղաքաշինության գործունեության բնագավառում Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության կողմից կատարված ստուգումների արդյունքներն ի գիտություն ընդունելու մասին

Կողմ (10)՝

ՎԻԼԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ	ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ԱՐԱ ԹՈՒՄԱՆՅԱՆ	ԺԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԱՐՍԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ԿԱՐԵՆ ՇԱՀԻՆՅԱՆ
ՄՈՒՐԱԴ ՄԵԼԻՔՅԱՆ	ՎԱՀԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՄՀԵՐ ՄԻՐԶՈՅԱՆ	ԱՐԹՈՒՐ ՍԱՀԱԿՅԱՆ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2014 թ փետրվարի 20

ք. Կապան